Հասնանցոց ցեղին բաժանումը

1․ Զըռըքինէ, 2․ Բըլըքինէ, 3․ Մէյտանի, 4․ Խսեանի (Յիսուսեաններ), 5․ Ալբեանի, 6․ Մամանի, 7․ Բանոքի, 8․ Ճեմալտինի, 9․ Բարազինէ, 10․ Շէյխ բզնի։

Զիլանցոց ցեղին պատկանող այլ և այլ բաժանումը

1․ Չէքէման, 2․ Մօթըլնի, Մօթըլքան, 3․ Պըլխերինէ, 4․ Թատըքինէ, 5․ Քուրտըքան, 6․ Էլինէ, 7․ Ղալասընի, 8․ Ճունուքի, 9․ Կասկինէ, 10․ Էլեանի, 11․ Բապըլինէ [1]։

Բ Ա Պ Ն Ո Ց

Բաղնոց 70—80 գիւղէ բաղկացած վիճակ մի է, կը գտնուի Մանազկերտի Արճէշի Անդաբի և Փաղկոտն գաւառի միջավայրն, թէև Արածանւոյ ձախ կողմն կընկնի, սակայն Անդաբի կառավարութեան կը պատկանի և ուստի կանցնի Պլիճ կետուկով յԱրճէշ և Վան գնացողն։

Երեք Հայ գիւղեր կան Բաղնոցա վիճակին մէջ, որոց վերան կիշխէ Հայդարցի Հիւսէին աղան, որ 1886

1․ Քրդական ցեղերու վերայ ընդարձակ գրուած ունի Տրապիզոնցի Պօղոս պատուելի Թումայեան (այժմ քահանայ), որ ամբողջ Հայաստան շրջած՝ մանրամասն աշխարհագրութիւնը գրած, քրդերու ցեղական յատկութեանց, ծագման, որոց լեզուներու տարբերութեան վերայ եւլն․ եւլն․ հատորներ լցնելու չափ գրի առած է եւ խիստ օգտակար պատմաբանաց եւ լեզուաբանաց (եթէ առ երկիւղիւ չէ կորուսած)։